որի առջեւ փախչում են կեանք եւ մարդ:

Ու այստեղ, մեծ աւերումների այս երկրի մէջ, կատաղի եւ հրաբխային ճեղքումներ, անընդհատաց լանջքերի այս վայրերում, ի՞նչ խիստ եւ կտրուկ խօսքեր է արտասանում բնութիւնը եւ ո՞րպիսի քանդուած երազների եւ մեծադղրդ պօէմաների հետքեր է պահում իր կոտրուած եւ սլացիկ գծերի մէջ:

Մեր լեզուն տարօրինակօրէն նմանում է մեր դաշտանկարին: Լաւայի շերտեր, քարի, տպակիի եւ երկաթի հետ խառնուած: Պղինձ, քիմիական կծու բաղադրութիւններ եւ ժայռ: Ու յանկարծ՝ ցած, աղքատիկ բուսականութեան մէջ թաքնուած՝ հարբեցուցիչ, բուրմնաւէտ այնպիսի խոտեր, որոնց ներկայութիւնը երբեք չէիր կարող երազել:

— **Աբովեանի անոտաչ եւ հմայիչ բարբառը:**

— Եթէ ուզում էք... Ցամենայն դէպս կարելի չէ ուրանալ, որ արդի մեր գրականութեան նախահայրը իր մէջ պարունակում է հրաբխային եւ տարերային այն շեշտը, որը միակ հարազատն է: Բաւական է դիտել մեր շուրջը՝ այդ ըմբռնելու համար:

— Տեսէ՛ք այդ լեռը:

— Լերկ, մերկ, մութ գոյնով, խստադէմ, եւ, սակայն, աչ կողքից ինչող գիծը ի՞նչ մեծ զգուշութեամբ, գրեթէ փափկութեամբ վար է սահում դէպի դաշտը, գրկում մի քանի բլրակներ եւ մեղմօրէն տարածւում դէպի հարաւ:

— Իսկ ձա՞խ կողքից:

— Ձախ կողքից կանակը դէմ է տալիս պարապին եւ, որովհետեւ յենարան չի գտնում, փլչում է, կտոր կտոր վայր ընկնում, շուրջը գտնուողներին տակնուվրայ անում եւ արագընթաց եռանկիւնիով մխրճւում է գետնի մէջ: Ո՞վ պիտի կարողանայ մի օր մեր լեռուի թաքնուած խորհուրդը երկրաբանական կազմութեան տեսակէտով ուսումնասիրել, եւ ո՞վ պիտի կարողանայ մեր երկրի երկրաբանական կազմութիւնը մեր լեզուի եւ մեր հոգու խորհրդներով լուսաբանել:

— Fiat-ը այս ճանապարհի վրայ 40 վերստից աւելի չի կարող վազել ու դա էլ...

— Ինչպէս մեր լեզուն իր մէջ պարունակում է ուժգին առասպելներ եւ մեծդի դիւցազներգութիւններ, պատրաստ երգի վերածուելու եւ հոյակապօրէն ծաղկելու մեծ վերակոչողի սրտի մէջ, այդպէս նաեւ մեր երկիրը իր խորքի մէջ պահում է արտաքին գոյացման չեքսպիրեան իր ձեւը: Դաշտանկարների նախակեանքը դրոշմուած է նիւթի մէջ, ու երկար տարիների ճիգերով միայն մարդը կարող է յայտնաբերել ու դուրս ժայթքեցնել նրա խոր էութիւնը:

— Մեծ բան է, եթէ նկատի ունենանք մեր ճանապարհների դրութիւնը:

— Խմբագիրը եւ ուրիշներ, որ գալիս են հին մի մեքենայով, արդէն երկրորդ անգամն է կանգ են առնում եւ փորը գետնին տուած ինքնաշարժի տակը պրպտում:

— Այդ ամէնը դեռ ոչինչ. ես զարմանում եմ՝ ինչպէ՞ս են կարողացել այս նեղլիկ զառիվարների եւ զառիվերների վրայով հրել նաւը:

— Նա՞ւը:

— Նա՛ւը: Այն նաւը, որը մեզ սպասում է Սեւանայ լճի վրայ:

— Տարօրինակ է, Սեւանայ լճի բոլոր նաւերն էլ սրտառուչ պատմութիւններ ունեն: Ես երբեք չպիտի մոռանամ...

— Դաշնակցականները մեկնել էին եւ Երեւանի վայրանում, վագոնի վրայ ցցուած, թողել էին մի նաւ:

— Բեսարաբիացի մի հային, որը 19-ին եկել էր Հայաստան իր միակ զաւկի հետ:

— Բաւականի մեծ, երկաթէ այդ նաւը, ամիսներով մնացել էր թառած, չոգեմեքենաների մօտ, ափը ընկած տարօրինակ ծովային մի ձուկի նման: Մելամաղձոտ բան է ցամաքի վրայ նաւ տեսնելը: Խորտակուած երազի նըման, ծխնելոյզը վեր տնկած, որը այդ թրոչունը, թեւերը ծալել նստել էր բուք ու բուրանի տակ, աչքերը տնկած անյայտ մի ճակատագրի առջեւ: Այդպէս ամիսներով...

— Բեսարաբիացի մի հա՞յ:

— Այո՛, եկել էր իբրեւ այնտեղի հայութեան պատգամաւոր: Ցիսունի մօտ մի մարդ, հայերէնը խօսում էր դժուարութեամբ, ռուսական շեշտով: Աչքերը փայլում էին, ոգեւորուած էր հայրենիքով, մեծ ծրագիրներ էր անում: Ասում էր, որ Բեսարաբիայում 60,000

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան